Լույս է տեսել

**Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի
իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթը**

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի, Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության եւ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 17.09.2014 թ. համատեղ որոշման համաձայն՝ լույս է տեսել «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն, հրատարակությունը «Նոյյան Տապան»-ի:

Ժողովածուն ներկայացնում է Հայկական Հարցի կարգավորման, Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ Հայաստանի նկատմամբ հայության իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական փաթեթի առանցքային՝ հիմնական բաժինը, դրան մաս կազմող հռչակագրերն ու հրամանագրերը, որոշումներն ու հայտարարությունները:

Մամլո հաղորդագրությանը կից ներկայացնում ենք ժողովածուի նախաբանը: Գիրքը ձեռք բերելու համար կարող եք դիմել «Նոյյան Տապան» լրատվական գործակալություն:

Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի Լրատվական ծառայություն

17.11.2014 թ.